https://doi.org/10.52027/18294685-kmr2024.1

ՄԵԼՅԱՆ ՔՐՍՏԻՆԵ
Հայաստանի ազգային գրադարան

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր՝ Ռումինիայի հայ համայնք, հայ մամուլ, «Հայ մամուլ» շտեմարան, սփյուռքահայ տպագիր-մշակութային ժառանգություն։

Keywords: Armenian community of Romania, Armenian periodicals, “Armenian Continuing Recourses” database, printed-cultural heritage of Armenian Diaspora.

Սույն հոդվածի նպատակն է լուսաբանել ու արժևորել Ռումինիայի հայ մամուլը, դրա դերն ու առաքելությունը, ռումինահայ համայնքի կյանքում արծարծված թեմաները և հարակից այլ հարցեր։ Պատմական անդրադարձ է կատարվել նաև նշյալ երկրի հայ համայնքին։

Հոդվածում առաջադրված խնդիրներն են ռումինահայ մամուլի ազգապահպան դերի և նշանակության կարևորումը հայոց ինքնության, լեզվի, մշակույթի և պատմության, ինչպես նաև այդ համայնքի ու Մայր հայրենիքի միջև առնչությունների ու փոխգործակցության տեսանկյունից։

Հայ սփյուռք. Ռումինիայի հայ համայնքը

Դարերի ընթացքում հայերի, ինչպես և այլ ժողովուրդների արտագաղթը հայրենիքից պայմանավորված է եղել երեք հիմնական գործոններով՝ տնտեսական, կրոնական և քաղաքական, որոնք ինքնուրույն պետականության բացակայության պայմաններում մշտապես ուղեկցվել են օտարազգի իշխանությունների կողմից իրականացվող բռնաճնշումներով և հալածանքներով [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 7]։

«Հայկական պետութիւնք հնագոյն ժամանակներէն վեր ներքին Ասիայէն եւ Ափրիկէէն եկող ազգայնութեանց ասպարէզ էին։ Մղուլք, Եգիպտացիք, Պարսիկք, Տաճիկք եւ Թաթարք արշաւեցին այս երկիրներն, աւար առին, աւերեցին եւ նաեւ ատեն ատեն տիրապետեցին» [Տան, 1891, 1]։ Հայ համայնքները դարավոր պատմություն ունեն։ Նրանց առաջացումը սերտորեն կապված է մեր ժողովրդի պատմական ճակատագրի հետ։ Հանրահայտ ճշմարտություն է, որ հայ ժողովուրդը համաշխարհային նշանակություն ունեցող մշակութային արժեքներ է ստեղծել ոչ միայն իր Մայր հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս, աշխարհի գրեթե բոլոր երկրներում [Գասպարյան, 1962, 3]։

Ռումինիայի հայկական գաղութը Եվրոպայում հնագույններից է։ Ենթադրվում է, որ Բյուզանդական կայսրության կազմակերպած բռնագաղթերի հետևանքով արդեն 5-12-րդ դդ. հայերի հոծ զանգվածներ են բնակեցվել Ռումինիայի տարածքում։ Ակքերմանում գտնվել է 967 թ. թվագրված մի արձանագրության բեկոր, որը նույնպես վկայում է հայերի գոյությունը Ռումինիայում՝ նախքան Բագրատունիների թագավորության անկումը [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 440]։

Հայերի առաջին գաղթը Ռումինիա դարերի պատմություն ունի։ Առաջին մեծ գաղթը կապված է Բագրատունիների թագավորության և Անիի անկման հետ և հայտնի է «Անիի գաղթականություն» անունով [Գասպարյան,1962, 203]։

Ռումինիայում հայերի վաղեմի և ստվար բնակության վկայությունն են հայկական բազմաթիվ տեղանունների, երբեմնի հայաշատ գրեթե բոլոր քաղաքներում հայկական թաղամասերի ու փողոցների առկայությունը։ Ռումինիայում հայերի հաստատման պաշտոնական տարեթիվը համարվում է 1350 թ.։

Մեծ թվով հայեր Ռումինիա են եկել, երբ թուրքերը զավթել են Կ.Պոլիսը (1453 թ.) և Ղրիմը (1475 թ.) [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 440]։

Ռումինահայ գաղութը կրկին համալրվել է 1894-1896 թթ. համիդյան ջարդերի, 1909 թ. Ադանայի կոտորածի և 1915 թ. Մեծ եղեռնի հետևանքով: Հայերի վերջին խոշոր գաղթը Ռումինիա տեղի է ունեցել 1922 թ., երբ քեմալական զորքերը կոտորել են Զմյուռնիայի քրիստոնյա բնակիչներին [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 441]: Ըստ հանրագիտարանի տվյալների Ռումինիայում բնակվում է շուրջ 2.5 հազար հայ: Հայեր են բնակվում Բուխարեստում, Բոտոշանում, Բրըիլայում, Գեռլայում, Գալացում, Եղիսաբեթուպոլսում, Հայաքաղաք (այժմ՝ Դումբրվենի), Կլուժ-Նապոկայում, Կոնստանցայում, Կուրտեա դե Արճեշ քաղաքում (սկզբնական անվանումը՝ Արճեշ), Յասսիում, Պիտեշտիում, Ջուրջովում, Սեպվիզում, Սիբետում, Սուչավայում, Տըրգու Օկնայում, Տուլչայում: Ռումինահայ համայնքում գործում են նաև հայկական եկեղեցիներ՝ Բոտոշանի Ս. Երրորդություն եկեղեցին, Ռոմանի Ս. Աստվածածին եկեղեցին, Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռը Բուխարեստի հայկական գերեզմանատանը, Սուչավայի Ս. Օգսենտ (Զամկա) վանքը, Տուլչայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Գեռլայի Ս. Երրորդություն մայր տաճարը, Սեպվիզի Ս. Երրորդություն եկեղեցին, Ջորջովի Ս. Աստվածածին եկեղեցին, Պիտեշտիի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Յասսիի Ս. Աստվածածին եկեղեցին, Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց մայր տաժարը [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 442-450]:

«Բուքրեշի մեջ հայերը 1581-են սկսյալ իրենց եկեղեցին ունեին կաթոլիկ հայերուն հետ ընկերակցովի» [Սիրունի, 1966, 47]: 1927 թ. ռումինահայոց թեմի առաջնորդարանին առընթեր հիմնադրվել է Ռումինահայ կենտրոնական մատենադարան-գրադարան ու թանգարան [Գալփագեան, 2021, 6]:

Ռումինահայ համայնքներում եկեղեցիների հետ հիմնվել են նաև դպրոցներ: Հայկական դպրոցներ են գործել Յասսիում (Հայկազյան), Ֆոկշանում (Ղևոնդյանց և Հռիփսիմյանց), Ռոմանում (Սողոմոնյան), Գալացում (Սահակ-Մեսրոպ), Բազարջիկում (Մամիկոնյան): Բուխարեստում առաջին հայկական դպրոցը բացվել է 1800 թ.: Հայտնի է Յասսիում հիմնված գիշերօթիկ դպրոցը (Գարագաշի դպրոց), նախակրթարան մանկապարտեզը [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 450]: Ռումինահայ շրջանում դպրոցների բացման և հայ մանուկների հայեցի դաստիարակության վրա հատուկ ուշադրություն է դարձվում 19-րդ դարի 40-50-ական թվականներին: Այս տարիները, ինչպես իրավացի նկատել է Վ. վարդապետ Պալճյանը, Ռումինիայի հայ գաղթավայրի համար «Տեսակ մը վերածննդի շրջան եղած են մշակութային և ազգային իմաստով» [Աբրահամյան, 1967, 140]:

Ռումինիայի մի շարք բնակավայրեր պահպանել են իրենց հայկական ծագումը: Ռումինիայի շատ պատմաբաններ իրենց աշխատություններում նշում են հայերի զգալի ավանդը արհեստների, առևտրի, ճարտարապետության և մշակույթի այլևայլ բնագավառներում [Գասպարյան,1962, 203]:

Ռումինիայում մինչև 1960-ական թթ. սկիզբը գործել են հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները, բարեգործական, մարզական, երիտասարդական, մշակութային ընկերություններ և միություններ, որոնց գործունեությունը կասեցվեց համայնավարական վարչակարգի կողմից: Բազմաբնույթ ազգային կյանքը սահմանափակվեց «Ստեփան Շահումյան» մշակույթի տան գործունեության շրջանակներում: Հայտնի են Ռումինիայի հայոց միությունը, Հայ մշակույթի տունը [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 451]:

19-րդ դարում Ռումինիայի հայ գաղթավայրում գործել են մի շարք հասարակական կազմակերպություններ: Բուխարեստում կազմակերպված միություններից կարելի է հիշել «Արարատյան ընկերություն»-ը՝ 1838 թ., «Արարատ» ուսումնասիրաց ընկերությունը՝ 1843 թ., «Հայրենասիրաց» ընկերությունը՝ 1887 թ., Սուչավայում՝ «Անի» ընկերությունը, Կոստանցայում «Արաքս» գրադարանային ընկերությունը և այլն [Աբրահամյան, 1967, 141]:

Ռումինահայ համայնքում զարգացած են գիտությունը, մշակույթը, թատրոնը, երաժշտությունը, կերպարվեստը կինորվեստը: Հայտնի են «Սոխակ», «Արաքս», «Նադեժդա», «Արշալույս», «Աստղիկ», «Զեփյուռ», «Հակոբ Պարոնյան» թատերախմբերը: Ժամանակակից

երաժշտության աստղերից է Անդա Կարուգարյանուն, ռումինական ջազի հայտնի անուններից է Հարրի Դավիդյանը, ռումինական կինոյի հիմնադիրներից է Յո. Շահիկյանը, ճանաչված են նկարիչներ Օ. Սեխպոսյանը, բեմանկարիչներ Պողոսին (Պողոսյան), Յո. Սավան և ուրիշներ [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 452-454]:

Ռումինիայի հայ մամուլը

Հայոց պարբերական մամուլն արտացոլում է հայ ժողովրդի բազմադարյա պատմական ուղին [Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), 1970, 5]:

19-րդ դարի վերջերից Ռումինիայի Ֆոքշան, Յասսի, Գալաց, Բրըիլա, Տուլչա, Բուխարեստ քաղաքներում գործել են հայկական տպարաններ, որտեղ լույս են տեսել շուրջ 50 անուն պարբերականներ, ինչպես նաև գեղարվեստական, պատմական, կրոնական գրքեր [Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, 2015, 924]:

Ռումինահայ մամուլի ավելի քան հարյուրամյա պատմության ընթացքում լույս են տեսել շուրջ 50 անուն հայերեն պարբերականներ, որոնց զգալի մասը կարճատև կյանք է ունեցել («Օր», «Հրազդան», «Հայաստան», «Նոր ուղի», «Հայ հայրենասերների միություն», «Երկիր» և այլն) [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 454]: Հրատարակչական արդյունավետ գործունեություն է ծավալել Գալացի հայկական հրատարակչությունը, որ կազմակերպել է Ղ. քահանա Փափազյանը: Այս տպարանը կոչվել է «Անի»: Փափազյանն է առաջին անձնավորությունը, որ հիմք է դրել հայ պարբերականի հրատարակությանը Ռումինիայի գաղթավայրում [Աբրահամյան, 1967,140]:

Ռումինահայ առաջին պարբերականը՝ «Հայկական տարեցույցներ» խորագրով, լույս է տեսել 1895-1899 թթ. Գալացում:

Կարևոր պարբերականներից են՝

«Անի», հայագիտական հանդես (ռումիներեն): Լույս է տեսել 1935-1938 թթ. (եռամսյա), 1941-43 թթ. (տարեգիրք), Բուխարեստում: Տպագրել է նյութեր հայ ժողովրդի պատմության ու մշակույթի վերաբերյալ, անդրադարձել հայ գրականության հարցերին, ներկայացրել հայերի դերը Ռումինիայի մշակութային, հասարակական կյանքում, ծանոթացրել հայազգի քաղաքական գործիչներին, գրողներին ու արվեստագետներին:

«Արազ», շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա: Լույս է տեսել 1932-1944 թթ. Բուխարեստում: Տպագրել է քաղաքական լուրեր, տեղեկություններ սփյուռքահայության և Հայաստանի առօրյայից, թարգմանաբար ներկայացրել ռումին և հունգար գրողների գործեր:

«Արարատ», հայագիտական հանդես (ռումիներեն): Լույս է տեսել 1924-1942 թթ. Բուխարեստում, վերահրատարակվում է 1990 թ.-ից: Լուսաբանում է ռումինահայության, հայ սփյուռքի կյանքը, ծանոթացնում Հայաստանի առօրյային: Տպագրել է հայագիտական ուսումնասիրություններ, գրախոսություններ, երգիծական նյութեր:

«Առաորա» («Արշալույս»), հայագիտական կիսամսյա հանդես (ռումիներեն): Լույս է տեսել 1906 թ. Բուխարեստում: Տպագրել է Վ. Մեշտուճյանի հայոց պատմությանը նվիրված ընդարձակ ուսումնասիրությունը, թարգմանություններ հայ դասականներից (Պետրոս Դուրյան, Գրիգոր Զոհրապ, Մկրտիչ Պեշիկթաշլյան): Զետեղել է պատմաբանասիրական նյութեր, ռումինահայ արվեստին ու ճարտարապետությանը, հայկական գաղթավայրերի պատմությանը նվիրված ուսումնասիրույթյուններ:

«Հայ հանրագիտակ», հանրագիտական տեղեկատու: Լույս է տեսել 1938-1940 թթ. Բուխարեստում: Պարունակում է հոդվածներ և տեղեկություններ հայ ժողովրդի պատմության, տնտեսության, աշխարհագրության, արվեստի, գրականության, պարբերական հրատարակությունների վերաբերյալ, ծանոթացնում հայ գործիչների կյանքին ու գործունեությանը: Ներկայացված են նաև օտարազգի հայագետները:

«Նոր արշալույս», քաղաքական, գրական և մշակութային եռօրյա, ապա՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1922-1934 թթ. Բուխարեստում: Նպաստել է հայապահպանության գործին, սփյուռք-հայրենիք կապերի հաստատմանը: Լուսաբանել է Ռումինիայի հայկական դպրոցների, թատերախմբերի, մշակութային մյուս հաստատությունների գործունեությունը, հրապարակել Հայաստանի առօրյային վերաբերող տեղեկություններ: Աշխատակցել են Երվանդ Օտյանը, Լևոն Շաթրյանը, Մկրտիչ Պոտուրյանը, Արշակ Չոպանյանը, Հրաչ Երվանդը և ուրիշներ:

«Նոր կյանք», հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1950 թ.-ից Բուխարեստում: 1982 թ.-ից՝ ամսաթերթ, 1990 թ.-ից՝ երկլեզվյան (10 էջը՝ հայերեն, 6-ը՝ ռումիներեն): Արտացոլում է ռումինահայ համայնքի կյանքը, հաղորդում տեղեկություններ Հայաստանից, սփյուռքի իրադարձություններից: Գրական-մշակութային բաժինը ներկայացնում է ռումինահայ գրողներին, ռումին գրականությունն ու արվեստը, տպագրում ճանաչված հայագետների հոդվածներ:

«Շեփոր», գրական-պատմագիտական պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1912-1913 թթ. Բուխարեստում: Նպաստել է հայապահպանությանը, կրթական գործի կազմակերպմանը: Հանդեսում տեղ են գտել Շահեն Նաթալիի, Հ. Խանլարյանի, Ա. Տիրոյանի, Վ. Փափազյանի, Ե. Տեմիրճիպաշյանի գրական ստեղծագործությունները, Կ. Բասմաջյանի, Մ. Պոտուրյանի, Վ. Թորգոմյանի հայագիտական ուսումնասիրությունները: Թարգմանաբար տպագրվել են ռումին գրողների գործեր [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 455]:

«Լեւոն Լանիս 1913-1914 տարիներին Պուքրէշի մէջ հրատարակեց **«Հայաստանի Արձագանգը»** շաբաթաթերթը, հայ եւ ռումէն լեզուներով:

1915թ.-ին կը հրատարակուի **«Արաքս»** շաբաթաթերթը, որուն պատասխանատուն եղած է Մ.Պալթազար:

Յաջորդ տարի՝ 1916 թ.-ին լոյս կը տեսնէ ուրիշ կիսաշաբաթաթերթ մը՝ **«Ինքնավար Հայաստան»,** հայ եւ ռումէն լեզուներով:

1920-1922 տարիներուն Հ. Մկրտիչ Պոտուրեան ասպարէզ կ'իջնէ հրատարակելով **«Մասիս»** շաբաթաթերթը**:**

1921 թ.-ին, կարճ շրջանի մը համար կը հրատարակուի **«Խարազան»** շաբաթաթերթը:

1923 թ.-ին Հ. Մ. Պոտուրեան լոյս կ'ընծայէ **«Դիցաւան»** տարեգիրքը:

Դարձյեալ 1923 թ.-ին, Հ. Մ. Պոտուրեան կը հրատարակէ **«Գաղութի Ձայնը»** շաբաթաթերթը, որ հազիւ 5 թիւ լոյս կը տեսնէ:

Հ. Մ. Պոտուրեան 1924 թ.-ին կը հրատարակէ **«Դիցաւան»** գրական ամսագիր մը, որմէ 3 թիւ միայն լոյս կը տեսնէ:

1923-1925 տարիներուն Պուքրէշի մէջ կը հրատարակուի **«Նաւասարդ»** գրական պարբերաթերթը 32 մեծադիր էջերէ կազմուած: Պարբերականը՝ գրականութեան եւ արուեստի մեծադիր էջերով պատկերազարդ գեղեցիկ հանդէս մըն էր:

«Գարուն» մանկական եւ պատանեկան պատկերազարդ ամսագիր մը հրատարակուեցաւ 1925 թ.-ին, միայն 3 թիւ լոյս տեսնելով:

1923-1926 տարիներուն լոյս տեսաւ **«Արի»** ամսօրեան՝պաշտօնաթերթը Հ.Մ.Ը.Մ.-ի Ռումանիոյ շրջանին, որուն արտօնատէրն էր Յ. Գ.Աթանասեան:

Նոյնպէս կարճ ժամանակաշրջանի մը համար, կը սկսի հրատարակուիլ 1925 Սեպտեմբերէն սկսեալ **«Մեղու»** ազգային-քաղաքական երգիծաթերթ մը:

1924 թ.-ին՝ Հ. Մ. Պոտուրեան, ընկերակցութեամբ Վ. Մէստուճեանի, հրատարակեցին 5 թիւ **«Փարոս»** ազգային անկախ շաբաթաթերթը:

1925թ.-ին լոյս կը տեսնէ **«Ռումանահայ Տարեցոյցը»՝** խմբագրութեամբ Հ. Մ. Պոտուրեանի եւ Ատրուշանի (Յ. Գ. Աթանասեան):

1927 Մարտ, Ապրիլ եւ Մայիս ամիսներուն լոյս տեսած է **«Հրազդան»** ամսագիրը 24 մեծադիր էջերով:

1928 թ.-ին հրատարակուեցաւ թիւ մը **«Դաշնակցութեան Օր»** անունով թերթէն:

«Հայաստան» անունով ազգային, քաղաքական եւ գրական շաբաթաթերթ մը կը հրատարակուի 1927 Դեկտ.-1930 տարիներուն:

1930-1931 թուականներուն Յ.Գ. Աթանասեան կը հրատարակէ **«Գիտութիւն եւ Գիտելիք»** ամսագիրը Ֆրումօասայի մէջ:

1933 թ. լոյս կը տեսնէ քանի մը թիւ չափածոյ զաւեշտական **«Քնաբեր»** շաբաթաթերթը:

1934-1935 թթ. լոյս կը տեսնէ **«Կոկոն»** մանկական եւ պատանեկան ամսաթերթը:

1937-1938 տարիներուն լոյս կը տեսնէ **«Հերկ»** ամսագիրը:

1943 Սեպտեմբեր-1945 Օգոստոս կը հրատարակուի **«Ճակատ»** շաբաթաթերթը» [Գալփագեան, 2021, 147-148]:

«Պահակ» (համայնավարական կողմնորոշումով) գրական, հասարակական-քաղաքական երկլեզվյան (հայերեն և ռումիներեն) շաբաթաթերթ: Լույս է տեսել 1935-1941 թթ., 1944-1946 թթ. Բուխարեստում: 1946-1950 թթ. լույս է տեսել «Հայաստանյան ճակատ» անվանումով:

«Մեւան» պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1950-1958 թթ. Բուխարեստում (հայերեն և ռումիներեն): Լուսաբանել է ռումինահայ համայնքի կյանքը, մասնավորապես Բուխարեստի Հայ մշակույթի տան և նրա ստեղծագործական խմբերի գործունեությունը: Տպագրել է Եղիշե Չարենցի, Սարմենի, Հովհաննես Շիրազի, Գուրգեն Բորյանի, Հակոբ Պարոնյանի, Միսաք Մեծարենցի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի և երիտասարդ գրողների ստեղծագործություններ, հայ գեղանկարիչների բազմաթիվ գործեր [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 455-456]:

Այժմ ներկայացնենք վերոնշյալ երկրում տպագրված հայ մամուլից որոշ արժեքավոր նյութեր և հոդվածներ:

Շեփոր (Բուխարեստ, 1912, №4-5) տպագրված է «Ռումանահայերը դպրոցներ չունին» վերնագրով հոդվածը (Ռումինահայ համայնքում հայկական դպրոցների, դաստիարակչական ձեռնարկների բացակայության մասին):

Նոր արշալոյս (Բուխարեստ, 1926, №371) տպագրված է Խ. Եգանեանի «Մանկական գրադարան»ի անհրաժեշտութիւնը» վերնագրով հոդվածը (Ռումինահայ համայնքում մանկական գրադարանի անհրաժեշտության մասին):

Նոր կյանք (Բուխարեստ, 2009, №3) «Դեպքեր ու դեմքեր» խորագրի ներքո տպագրված է Հ. Սիրունիի «Նպաստը Զոր Ընծայեց Ռումանահայը Հայ Գիրքին» վերնագրով հոդվածը (Ռումինիայում հայ գրքի տպագրության, հայ գրքի տպագրության գործում մեծ ավանդ ունեցած Պողոս Սեբաստյանի, Գրիգոր Պըյրգլիուի մասին):

Նոր կյանք (Բուխարեստ, 2010, №10-11) տպագրված է Արշալույս Պարոնյանի «Ամստերդամում հայկական տպագրության հիմնադրման 350-ամյակը» վերնագրով հոդվածը:

Նոր կյանք (Բուխարեստ, 2011, №9-10) տպագրված է Տաթեւ վարդապետ Հակոբեանի «Ռումինահայ երիտասարդության ինքնության հիմնախնդիրները: «Ընթերցվել է Սփյուռք-Հայաստան Համաժողովին 19 Սեպտեմբեր 2011» վերնագրով հոդվածը (Ռումինահայ համայնքի խնդիրների մասին):

Նոր կյանք (Բուխարեստ, 2011, №9-12) տպագրված է Վարդան Դևրիկյանի «Անիական փայլի մշտաշող մի ճաճանչը» վերնագրով հոդվածը (Ռումինահայ համայնքում գտնվող հայկական եկեղեցիների մասին):

Նոր կյանք (Բուխարեստ, 2012, №3-4) տպագրված է «Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը թարգմանվում է աշխարհի տարբեր լեզուներով» վերնագրով հոդվածը:

Նոր կյանք (Բուխարեստ, 2013, №1-2) տպագրված է «Սիրանոյշի մանկութիւնը» վերնագրով հոդվածը (Դերասանուհի Սիրանույշի մասին):

Նոր կյանք (Բուխարեստ, 2023, №5-6) տպագրված է «Հ. Ճ. Սիրունի ականավոր գրող և պատմաբան» վերնագրով հոդվածը (Հրապարակախոս, հայագետ և գրող, Ռումինիայում հայագիտության և արևելագիտության զարգացման գործում մեծ ավանդ ունեցած Հակոբ Ճոլոլյան Սիրունու մահվան 50-ամյակի առթիվ) [«Հայ մամուլ» շտեմարան]։

Ռոմանահայ մամուլը իր դերը ունեցաւ նախ գաղութին ինքնապահպանութեան գործին մէջ, յետոյ ազգային գոյութեան պահպանման սատար հանդիսացաւ, համոզուած, որ լեզուն ազգային գոյութեան կենսական ոյժը կը ներկայացնէ. ազգակիցներուն եւ օտարներուն ծանօթացուց ու անոնց մէջ արթնացուց հետաքրքրութիւն հանդէպ մեր ժողովուրդին պատմութեան եւ մշակոյթին [Գալփագեան, 2021, 149]։

Հայաստանի ազգային գրադարանի կայքի շտեմարանների շարքում կարևոր է նաև «Հայ մամուլ» շտեմարանը, որտեղ մուտքագրված են պարբերականների հիմնական մատենագիտական տվյալները՝ պարբերականի հերթական համարները պարունակող կից աղյուսակով։ «Կարդալ առցանց» հղման ներքո զետեղված են պարբերականների թվային պատճենները։

SUMMARY

In this article we touched upon the Armenian community of Romania, the Armenian press, as well as the Armenian press of Romania. Under the dictates of historical and political circumstances, Armenians also settled in Romania. They have created their respective community structures, published the Armenian press, etc. This press touches upon various issues: community life, Homeland-Diaspora relations, etc. The coverage of the problems of the Armenian press in general is of great relevance. The Armenian press of Romania is also developing activities in the Armenian community to preserve the Armenian identity, especially among the younger generation, contributes to the preservation of the Armenian language, traditions and customs. The “Armenian Press” database on the website of the National Library of Armenia contains bibliographic data of the Armenian periodicals of Romania in serial numbers. There is a link “read online” where digital copies of periodicals are available.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ա. Գիրք Բ / Խմբ.՝ Ե. Սարգսյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1967, 424 էջ։
2. Գալփագեան Յովհ. Ռումանահայ գաղութը / Հրատարակության պատրաստեց Տեր Հեթում քահանա Թարվերդյանը, Երկրորդ հրատարակություն, Երևան, Էդիտ Պրինտ, 2021, 248 էջ։
3. Գասպարյան Ս. Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր։ Մշակութային կյանքի ուրվագիծ, Երևան, Հայպետհրատ, 1962, 248 էջ։
4. Հայ գրատպություն և գրքարվեստ։ Հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2015, 1120 էջ։
5. Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)։ Համահավաք ցանկ։ ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրություն, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի կոմպլեկտավորման բաժին / Կազմ.՝ Ա. Կիրակոսյան, Երևան, ա.հ., 1970, 621 էջ։
6. Հայ սփյուռք հանրագիտարան / Խմբ. հանձնաժողով՝ Հ. Այվազյան և ուրիշ., Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2003, 731 էջ։
7. Սիրունի Հ. Հայ եկեղեցին Ռումեն հողի վրա։ Նիկոլա Յորգա = Biserica armeana pe pamantul romanesc: Nicolae Iorga / Խմբ.՝ Ա. Հատիտյան, Էջմիածին, տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1966, 268 էջ։
8. Տան Դեմետրիոս Արեւելեան Հայք ի Պուքովինա / Թարգմ.՝ Հ. Գրիգորիս վ. Գալէմքեարեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1891 79 էջ։
9. «Հայ մամուլ» շտեմարան, [էլեկտրոնային հրատարակություն] URL: https://is.gd/HqptRU 27.03.2024։